ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
Երևան, 2018

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ա 910

Ա 910 Արմատականության և բռնության մշակույթը երիտասարդության շրջանում Հայաստանում.- Եր.: ԶարտՊրինտ, 2018.- 16 էջ:

Սույն հրատարակությունը հնարավոր է դարձել «Խաղաղության և սիրո վեկտոր» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության կողմից՝ շվեդական «More Mosaic» կազմակերպության հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Շվեդիայի երիտասարդության և քաղաքացիական հասարակության գործակալության աջակցությամբ:

Սույն հրատարակությունը պատրաստել է «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունը: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն կազմակերպությունը: Հրատարակությունը որևէ կերպ չի ընդգրկում կամ արտացոլում գործընկեր և դոնոր կազմակերպությունների տեսակետները:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում այս հրատարակության հետազոտական թիմին՝ մեր գործընկերներ Անահիտ Սիմոնյանին և Սոֆյա Մանուկյանին իրենց կատարած աշխատանքի համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

www.apy.am

ISBN 978-9939-9185-0-1

© Հայ առաջադեմ երիտասարդական ՀԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակության ոչ մի մասը չի կարող վերարտադրվել, տարածվել կամ օգտագործվել որևէ ձևով՝ ներառյալ էլեկտրոնային, պատճենահանման, ձայնագրման միջոցով կամ տեղեկատվության պահեստավորման և որոնման համակարգերով, առանց գրավոր թույլտվության:

© ԶարտՊրինտ ՍՊԸ, 2018

Ներածություն

Թեպետ ընդունված կարծիք կա, որ գործազրկության բարձր մակարդակը և ցածր եկամուտները երիտասարդության շրջանում բռնության և արմատականության աճի հիմնական պատճառներն են, որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ ոչ թե աղքատությունը, այլ անարդարությունը, խտրականությունը, կոռուպցիան և անվտանգության ուժերի կողմից չարաշահումների փորձերն են հանգեցնում երիտասարդության շրջանում բռնության և արմատականության ձևավորմանը:[1] Նման եզրակացություններ հիմնականում արտացոլվում են այն ուսումնասիրություններում, որոնք փորձում են ավելի խորը ուսումնասիրել բռնի ծայրահեղականության և ահաբեկչության պատճառները: Այնուամենայնիվ, այդ օրինաչափությունները նկատվում են նաև այնպիսի հասարակություններում, որոնք անպայմանորեն ծայրահեղական գաղափարախոսությունների կիզակետ չեն դառնում: Դրա վառ օրինակ են Աթենքում վերջերս տեղի ունեցած բուռն բողոքի ակցիաները, որոնց ժամանակ 20.000 մարդ բողոքում էր պետական նոր սահմանափակումների դեմ:[2] Ցուցարարները խորհրդարանի շենքը պաշտպանող անվտանգության ուժերի վրա էին նետում բենզինի ռումբեր և քարեր: Այս բռնի վարքը երկրում տնտեսական սահմանափակումների արտացոլանքն է՝ զուգորդված քաղաքական գործընթացներով, որոնք հասարակության լայն շահերը անտեսված են թողել:

Նման ցույցերը, որոնք հասարակությանը՝ հատկապես երիտասարդներին փոողոց են դուրս բերում, կարող են լինել ներքին և արտաքին գործոնների արդյունք:[3] ՄԱԿ ԶԾ–ի կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ որոշ ներքին գործոններ, ինչպես վերոհիշյալ օրինակի դեպքում, կարող են ներառել պետության և նրա կառավարման հանդեպ հիասթափվածության զգացումը, սոցիալական անհավասարության ընկալումը, ինքնաարտահայտվելու անկարողությունը, չլսված և չներգրավված, ստորացված, չհարգված և չճանաչված լինելու զգացողությունը և այլն: Միևնույն ժամանակ, արտաքին գործոնները

1 Youth & Consequences: Unemployment, Injustice and Violence, Mercy Corps, 2015, https://www.mercycorps.org/research–resources/youth–consequences–unemployment–injustice–and–violence

2 A. Sandford, Protests and clashes in Athens as parliament passes more reforms, euronews, 2018, http://www.euronews.com/2018/01/15/protests–and–clashes–in–athens–as–parliament–passes–more–reforms

3 The Center for Free Elections and Democracy, "Survey of the Drivers of youth Radicalism and Violent Extremism in Serbia", UNDP Serbia, 2016, http://www.rs.undp.org/content/serbia/en/home/library/crisis_prevention_and_recovery/istra_ivanje–o–pokretaima–radikalizma–i–nasilnog–ekstremizma–meu.html

կարող են ներառել աշխարհաքաղաքական զարգացումները, ժողովրդագրական փոփոխությունները, կլիմայի փոփոխության հետևանքով տնտեսական ճնշումները, միգրացիոն հոսքերը, ինչպես նաև սոցիալական և զանգվածային լրատվամիջոցների տարածումը: Որոշ հասարակություններում այդ գործոններից մեկն էլ կարող է բավարար լինել, որպեսզի առաջանա արմատականացում, բայց առավել հաճախ այս երկու գործոնները հանդես են գալիս միասին:

Արտաքին և ներքին գործոնների համադրությունը արտացոլված է հայ հասարակությունում, որտեղ որոշ արտաքին գործոններ, ինչպիսիք են աշխարհաքաղաքական զարգացումները, հանդես են գալիս ներքին գործոնների հետ միասին. օրինակ՝ հայրիշխանական գերակայությունը, ինչն էլ հանգեցնում է ոչ միայն հասարակության որոշ շերտերի ճնշմանը, այլև այլ խմբերում բռնության և արմատականության զարգացմանը: Մի կողմից գոյություն ունի «ազգ–բանակ» հայեցակարգի պետական մակարդակով խթանման քաղաքականությունը, որի նպատակն է մոբիլիզացնել հանրությանը՝ ազգային անվտանգությանը ծառայելու նպատակով,[4] ինչն, իր հերթին արտաքին գործոնի՝ տարածաշրջանային հակամարտության մեջ Հայաստանի ներգրավվածության արդյունքն է: Մյուս կողմից, այս հակամարտությունը անմիջականորեն ներթափանցում է կյանքի բոլոր ոլորտներ՝ սոցիալ–տնտեսական ոլորտներից մինչև մշակութային և այլն:

Արդյունքում, ցանկացած շեղում «*ավանդականից*» դիտարկվում է որպես ազգային անվտանգության սպառնալիք: Ֆեմինիզմը, օրինակ, հասարակության պահպանողական շերտերի կողմից հետևյալ կերպ է ընկալվում.

«Ֆեմինիստները ցանկանում են այլասերել հայ ընտանիքը: Ֆեմինիզմի պատճառով ամուսնալուծությունների թիվն աճել է, և կանայք դարձել են «անբարո»»: Ֆեմինիզմը դեմ է մայրությանը և այն ծնելիության անկման պատճառ է դարձել, ինչը ազգի ապագան դնում է սպառնալիքի տակ»:[5]

«Ազգ–բանակ» գաղափարախոսության համատեքստում կանայք նույնպես ունեն իրենց ուրույն դերը՝ որպես ապագա զինվորների մայրեր,[6] ուստի այս մո-

4 G. Abrahamyan, "Armenia: Nation–Army Plan Raises Concerns About Society's Militarization", Eurasia.net, 2017 https://eurasianet.org/node/8399

5 A. Voskanyan, "Myths about "Dangers" of Feminism in Armenian Society, Heinrich Boll Stiftung, 2017, http://www.feminism–boell.org/en/2016/03/17/myths–about–dangers–feminism–armenian–society

6 A. Nikoghosyan, "In Armenia, gender is geopolitical", openDemocracy, 2016, https://www.opendemocracy.net/od–russia/anna–nikoghosyan/in–armenia–gender–is–geopolitical

տեցումը հասարակության մեջ բևեռացման ընդամենը մեկ օրինակ է: Մեկ այլ օրինակ է «նույնասեռականությունը որպես ազգի ապագայի համար սպառնալիք» դիտարկելը:[7] Այս ընկալումը համապատասխանում է «ազգ–բանակ» հայեցակարգի շրջանակներում արմատավորված հայրիշխանական համակարգին և այն շատ տեսանելի դրսևորում ունեցավ հատկապես այն ժամանակ, երբ երկու երիտասարդներ հարձակվեցին ԼԳԲՏ համայնքին հյուրընկալ բարերից մեկի վրա՝ «Մոլոտով» կոկտեյլով 2012թ.–ին:[8] Ոչ միայն իշխանությունների կողմից չհնչեց ոչ մի դատապարտում, այլև հարձակվողները մի քանի օրից ազատ արձակվեցին, ընդ որում նրանցից մեկի համար աջակողմյան կուսակցության պատգամավորների կողմից տրվեց գրավ: Մեկ այլ աջակողմյան իշխող կուսակցության ներկայացուցիչ արդարացրեց հարձակումը՝ անվանելով բարը «այլասերության որջ» և մեղադրելով ԼԳԲՏ համայնքին՝ «հասարակությունը իր բարոյական արժեքներից օտարելու» նպատակ հետապնդելու մեջ:[9]

«Ազգ–բանակ» գաղափարախոսության մեկ այլ օրինակ է աշխատող քաղաքացիների հարկումը լրացուցիչ 1000 դրամով՝ ծառայության ընթացքում վիրավորված զինվորներին կամ սպանված զինվորների ընտանիքներին աջակցելու նպատակով:[10] Հաշվի առնելով նախորդ տարիներին արձանագրված եկամտահարկի աճը,[11] որոշ լայն օգտագործման ապրանքատեսակների գների բարձրացումը,[12] ինչը հարվածում է հատկապես ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին, պարզ է դառնում, որ կառավարությունը ստեղծում է նախադրյալներ հասարակության, հատկապես՝ երիտասարդության շրջանում արմատականության խորացման համար: Սա, իր հերթին, պարունակում է աջաթևյան իշխող կուսակցության համար ռազմական հռետորաբանություն ներմուծելու առկա ներուժ, որը «կհիշեցնի» հասարակությանը, թե ինչպես սոցիալական անհանգստությունները կարող են պարարտ հող ստեղծել «արտաքին թշնամիների» համար՝ միաժամանակ ուղղորդելով երիտասարդների

7 A. Voskanyan, op. cit.

8 O. Kriokorian, "Arson Attack on Gay–Friendly Bar in Yerevan Raises Fears of Nationalist Extremism", Ararat, 2012, http://araratmagazine.org/2012/05/arson–attack–on–gay–friendly–bar–in–yerevan–raises–fears–of–nationalist–extremism/

9 ArmeniaNow, "DIY Incident Stirs National Debate: Hate crime was "right and justified" says deputy speaker of National Assembly", 2012, https://www.armenianow.com/society/38162/diy_gay_lesbian_club_bomb_attack_yerevan_reactions

10 Hetq, "Armenian Parliament Passes Controversial 1,000 AMD "Soldier Tax" Bill", 2017, http://hetq.am/eng/news/72792/armenian–parliament–passes–controversial–1000–amd–soldier–tax–bill.html

11 JamNews, "Armenia's middle class hit by new taxation amendments", 2018, https://jamnews.net/?p=79993

12 News.am, "Expert: Prices of about 40 products are expected to rise in Armenia", 2018, https://news.am/eng/news/430224.html

դժգոհությունը «ներքին թշնամիների», օրինակ՝ ի թիվս այլոց, ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների, ֆեմինիստների և խաղաղության ջատագովների դեմ:

Հաշվի առնելով այս ամենը՝ հետաքրքրական է ուսումնասիրել բևեռացման և արմատականացման ներկայիս միտումները, մասնավորապես՝ հայաստանյան երիտասարդության շրջանում: Նման ուսումնասիրության փորձ է արվել 2017թ. նոյեմբերին «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ–ի կողմից: Կազմակերպությունը առցանց հետազոտություն է անցկացրել՝ նպատակ ունենալով բացահայտել արմատականության և բռնության դրսևորումների առկա միտումները և ձևերը Հայաստանում ապրող երիտասարդների շրջանում: Հարցման նպատակով ‹‹*ծայրահեղականացում*›› եզրույթը սահմանվել է որպես գործընթաց, որի ընթացքում անհատները որդեգրում են ծայրահեղ քաղաքական, սոցիալական և/կամ կրոնական գաղափարախոսություններ և ձգտումներ, որոնց շրջանակներում որոշակի նպատակների հասնելն արդարացնում է բռնության տարբեր ձևերի օգտագործումը:

Հարցումն անցկացվել է Երևանում (հարցվածների 72%) և Հայաստանի մարզերում (հարցվածների 28%) բնակվող 163 երիտասարդների շրջանում: Մասնակիցների 65%–ը կին է:

Հարցվածների մասին լրացուցիչ տեղեկություններ: *Հարցվածների 71%–ը նշել է, որ աշխատում է և որ իրենց միջին ամսական եկամուտը տատանվում է 100.000–ից մինչև 250.000 դրամի սահմաններում (180–260 եվրո): Ընտանեկան տեսանկյունից կազմակերպության համար կարևոր ցուցիչ էր մասնակիցների ներգրավվածությունը երիտասարդների հետ աշխատանքի ոլորտում: Հարցվածների 55.8%–ը երիտասարդական ոլորտի աշխատող է: Երիտասարդական աշխատողների (ԵԱ) և ոչ երիտասարդական աշխատողների (ոչ ԵԱ) միջև հարաբերակցությունը կարևոր է, քանի որ երիտասարդական աշխատողները լավ դիրքում են գտնվում երիտասարդության շրջանում առկա միտումները և խնդիրները դիտարկելու և այդ խնդիրները համապարփակ ձևով բացահայտելու համար: Հարցվածների մեծ մասը 17–ից 23 տարեկան են (56%–ը երիտասարդական աշխատողներ և 45.5%–ը ոչ երիտասարդական աշխատողներ): Յուրաքանչյուր խմբում հարցվածների մոտ 35%–ը 24–ից 29 տարեկան են:*

Անհանդուրժողականության դրսևորման ամենատարածված տեսակները

Պատասխանելով ամենակենտրոնական հարցին՝ երկու խմբերում էլ հարցվողների ճնշող մեծամասնությունը համարել է հոմոֆոբիան (հարցվածների մոտ 95%–ը) Հայաստանում *անհանդուրժողականության դրսևորման* ամենատարածված տեսակ: Իսլամաֆոբիան երիտասարդական աշխատողների շրջանում (հարցվածների 52.7%) և կնատյացությունը (կանանց նկատմամբ անհանդուրժողական և կանխակալ վերաբերմունք) ոչ ԵԱ–ների շրջանում երկրորդ տեղն են զբաղեցնում: Նման պատասխանների պատճառը, մասնավորապես ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների դեպքում, նրանց հանդեպ շարունակական խտրականությունը վերացնելու պետական կամքի բացակայությունն է, ինչն էլ հանգեցնում է նրանց նկատմամբ ատելության խոսքի և բռնության դեպքերի[13]: Դե իսկ կնատյացության պարագայում, օրինակ, վերջերս ընդունված ընտանեկան բռնության դեմ օրենքը[14] դեռ պետք է ապացուցի իր արդյունավետությունը: Իսկ ահա իսլամոֆոբիայի դրսևորման պատճառների հիմքում են ընկած որոշ ներքին գործոններ, ինչպիսիք են հայ հասարակության մոնոէթնիկ և միադավան բնույթը[15], ինչպես նաև որոշ արտաքին գործոններ, մասնավորապես՝ իսլամական հավատ դավանող հարևանների հետ երկարատև կոնֆլիկտների պատմությունը: Հասարակության տարբեր խմբերի նկատմամբ անհանդուրժողականության դրսևորման ընդհանուր պատկերը հետևյալն է.

Ըստ ԵԱ– ի՝



13 Human Rights Watch, Armenia Report: 2015, https://www.hrw.org/world–report/2016/country–chapters/armenia

14 R. Janbazian, "Armenia Adopts Law against Domestic Violence at Last", ArmenianWeekly, 2017, https://armenianweekly.com/2017/12/08/armenia–adopts–law–domestic–violence–last/

15 The World Factbook: Armenia, CIA, https://www.cia.gov/library/publications/the–world–factbook/geos/am.html

91.2%՝ Հոմոֆոբիա
52.7%՝ Իսլամաֆոբիա
45.1%՝ Այլատյացություն
44%՝ Կնատյացություն
19.8%՝ Ազգային և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ բացասական և անհանդուրժողական վերաբերմունք
14%՝ Փախստականների հանդեպ բացասական և անհանդուրժողական վերաբերմունք
7.7%՝ Անհանդուրժողականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

Ըստ ոչ ԵԱ–ի՝



97.2%՝ Հոմոֆոբիա
54.2%՝ Կնատյացություն
48.6%՝ Իսլամաֆոբիա
43.1%՝ Այլատյացություն
20.8%՝ Ազգային և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ բացասական և անհանդուրժողական վերաբերմունք
13.9%՝ Անհանդուրժողականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ
9.7%՝ Փախստականների հանդեպ բացասական և անհանդուրժողական վերաբերմունք

Երիտասարդների շրջանում *բռնության դրսևորման* հաճախականությունը գնահատելու նպատակով հարցվածներին խնդրել են գնահատել բռնության դեպքերի հաճախականությունը 1–ից (պատասխանողի շրջապատում բռնու-

թյան բացակայություն) 5 (պատասխանողի շրջապատում բռնության բարձր հաճախականությունը) բալանոց սանդղակով՝ մատնանշելով նաև առավել թիրախավորված խմբերին:

Երիտասարդական աշխատողների և ոչ երիտասարդական աշխատողների խմբերի մեծամասնությունը բռնության դրսևորումներն իրենց շրջապատում գնահատում է միջինից բարձր (3 կամ ավելի միավոր): Ըստ երիտասարդական աշխատողների 26,4%–ի, բռնության դեպքերը շատ տարածված են և հավանական (4 և 5 միավոր), մինչդեռ երիտասարդական աշխատողների 37,4%–ը միջինից բարձր (3 միավոր) է գնահատում երիտասարդների շրջանում բռնության հաճախականությունը: Ինչ վերաբերում է ոչ երիտասարդական աշխատողներին, ապա 33,3%–ը բռնության հաճախականությունը գնահատել է 3 միավոր, իսկ բռնության դեպքերի բարձր հաճախականությունը (4 միավոր) և նման դեպքերի բացակայությունը ոչ երիտասարդական աշխատողների շրջանակներում գնահատվել են գրեթե հավասար՝ մոտավորապես 13,9% յուրաքանչյուրը:

Հատկանշական է, որ երկու խմբերն էլ համարել են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին որպես բռնության և անհանդուրժողականության առավել մեծ ազդեցություն կրող խումբ (5 միավոր), իսկ ակտիվիստներն ու մարդու իրավունքների պաշտպանները զբաղեցրել են երկրորդ հորիզոնականը (4 միավոր ԵԱ–ների կողմից և 3 միավոր՝ ոչ ԵԱ–ների կողմից): Հետաքրքիր է, որ այլ կրոնների և հավատքների, ինչպես նաև կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդեպ անհանդուրժողականության և բռնության դեպքերը երկու խմբերում էլ հաճախականության նույն ընկալումն ունեն, ինչ կանանց հանդեպ բռնության և անհանդուրժողականության դեպքերի պարագայում՝ յուրաքանչյուրը 3–ական միավոր:

Բռնության այս երկու դրսևորումների հավասար ընկալումը կարող է պայմանավորված լինել լուսաբանման հաճախականությամբ, քանի որ մինչ կրոնական փոքրամասնությունների կամ այլ կրոնների և հավատքների ներկայացուցիչների նկատմամբ անհանդուրժողականության և բռնության դեպքերը հաղորդվում են լրատվամիջոցներով (դրական կամ բացասական լույսի ներքո), և ոստիկանության կողմից համեմատաբար արագ արձագանք կա այս դեպքերում, կանանց նկատմամբ անհանդուրժողականության և բռնության դեպքերը հաճախ

մնում են չբարձրաձայնված:[16] Դե իսկ ընտանեկան բռնության դեմ օրենքը բավականին նոր է (այն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 8–ին), որպեսզի հնարավորություն ընձեռի բավարար տվյալների հավաքագրման կամ հարցի վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացման համար: Այստեղից էլ հավանական հավասար ընկալումն է այս երկու խնդիրների շուրջ: Չնայած որ իրականում միայն տեղական կազմակերպություններն ամեն տարի ընտանեկան բռնության մասին արձանագրող ավելի քան 2000 ահազանգ են ստանում:[17]

Մարդու իրավունքների պաշտպանները և ակտիվիստները նույնպես դիտարկվում են որպես բռնության թիրախ. նրանք հաճախակի պիտակավորվում են, իրենց գործունեության պատճառով նրանց դեմ գրանցվում են սպառնալիքների դեպքեր[18], և սա ի հավելումն ակտիվիստների նկատմամբ համակարգային բռնության դեպքերի՝ վերջին տարիներին բողոքի ցույցերի ժամանակ *ոստիկանության ուժերի լիազորությունների*[19] չարաշահման տեսքով:

Ըստ ԵԱ–ի՝

- ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ **5** միավոր
- Ակտիվիստների և իրավապաշտպանների նկատմամբ՝ **4** միավոր
- Այլ կրոնների և հավատքների ներկայացուցիչների նկատմամբ՝ **3** միավոր
- Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ՝ **3** միավոր
- Կանանց և աղջիկների նկատմամբ՝ **3** միավոր
- Այլ ազգերի ներկայացուցիչներին/օտարերկրացիների նկատմամբ՝ **2** միավոր
- Ազգային և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ՝ **2** միավոր
- Փախստականների նկատմամբ՝ **2** միավոր
- Քաղաքականության մեջ ներգրավված անձանց նկատմամբ՝ **2** միավոր
- Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ **1** միավոր
- Տարեց մարդկանց նկատմամբ՝ **1** միավոր

16 Coalition to Stop Violence Against Women, "Femicide in Armenia: A Silent Epidemic", 2016, http://coalitionagainstviolence.org/wp–content/uploads/2016/05/Femicide_Report_ENG.pdf?be05b6

17 ibid.

18 Epress.am, "Armenian Human Rights Defenders Work in Inadequate Conditions, HRH Report Says", 2017, http://epress.am/en/2017/08/07/armenian–human–rights–defenders–work–in–inadequate–conditions–hrh–report–says.html

19 Human Rights Watch Report: Armenia, 2016, https://www.hrw.org/world–report/2017/country–chapters/armenia

Հարցվածներին խնդրել էինք նկարագրել բռնության և անհանդուրժողականության դեպքեր վերոնշյալ խմբերի նկատմամբ, որը տեղի է ունեցել իրենց համայնքում:

Ահա երիտասարդական աշխատողների պատասխաններից մի քանի հղումներ.

Հոմոֆոբիայի դեպք. *«Սեռական փոքրամասնությունների վերաբերյալ լսել եմ հետևյալ արտահայտությունը. «նենց օրն եմ քցել դրանց, որ մեղք էին հազիվ փախան ձեռիցս»»*:

Ակտիվիստների նկատմամբ բռնություն. *«Ակտիվիստների նկատմամբ ոստիկանների դաժան ու կոպիտ վերաբերմունքի եմ ականատես եղել»*:

Անհանդուրժողականություն այլ էթնիկ կամ կրոնական խմբերի ներկայացուցիչների նկատմամբ. *«Երթուղայինի վարորդները շատ հաճախ ծաղրում են հնդիկ ուսանողներին: Կամ հայերը բացասաբար են վերաբերվում Իրանից եկած տուրիստներին»:*

«Ընդամենը 2 ամիս առաջ, կրոնական փոքրամասնության ներկայացուցչի, մի քանի երիտասարդ կանչել էին առանձին խոսելու, հորդորելով թե խոսելու են ուղղակի կրոնից և ծեծի էին ենթարկել, պնդելով թե նա իրավունք չունի խոսել իր դավանանքի մասին»:

Կանանց նկատմամբ բռնություն. *«Կոնկրետ իմ համայնքում բռնությունն ավելի հաճախ լատենտ կերպով է լինում հաճախ թվում է թե այն չի լինում, սակայն իրականում կա բավականին մեծ ճնշում կանանց վրա»:*

«Հարբած ամուսինը ծեծել է «դավաճանության» մեջ կասկածվող կնոջը»:

Սոցիալական կարգավիճակի վրա հիմնված բռնություն. *«Սոցիալական ծանր վատ վիճակում ապրող տղային հասակակիցները ծեծի ենթարկեցին, առանց որևէ խղճահարության...»*:

Ըստ ոչ ԵԱ-ի՝

- ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ **5** միավոր
- Ակտիվիստների և իրավապաշտպանների նկատմամբ՝ **3** միավոր
- Այլ կրոնների և հավատքների ներկայացուցիչների նկատմամբ՝ **3** միավոր

- Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ՝ **3** միավոր
- Կանանց և աղջիկների նկատմամբ՝ **3** միավոր
- Այլ ազգերի ներկայացուցիչներին/օտարերկրացիների նկատմամբ՝ **1** միավոր
- Ազգային և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ՝ **1** միավոր
- Փախստականների նկատմամբ՝ **1** միավոր
- Քաղաքականության մեջ ներգրավված անձանց նկատմամբ՝ **1** միավոր
- Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ **1** միավոր
- Տարեց մարդկանց նկատմամբ՝ **1** միավոր

Ահա մի քանի օրինակներ ոչ երիտասարդական աշխատողների պատասխաններից՝

Հոմոֆոբիայի դեպքեր. *«Ես ինքս ատում եմ ԼԳԲՏ–ներին»*:

Անհանդուրժողականություն այլ կրոնական խմբերի ներկայացուցիչների նկատմամբ. *«Եհովաներին են ճնշում, լավ էլ անում են»*:

Կանանց հանդեպ բռնություն. *«Երբ երիտասարդ տղան մի աղջկա էր փախցրել, իրա կամքին հակառակ, և դրանից հետո մեկ տարի տանից դուրս չէր թողնում, և՛ հոգեբանական բռնություն կար և՛ ֆիզիկական: Բայց ոչ մեկի ընտանիքը ոչ մի կերպ չէր արձագանքում: Ասես այս աղջիկը դարձել էր ինչ–որ իր, որին գնել են և տնօրինում են ինչպես կուզեն»*:

«Ամենահաճախ հանդիպողը ամուսնու ընտանիքում կանանց հանդեպ բռնությունն է»:

Անհանդուրժողականություն փախստականների նկատմամբ. *«Տեսել եմ ինչպես են ստորացնում փախստականի, հրահրելով կռիվ»*:

Անհանդուրժողականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ. *«Հաշմանդամություն ունեցող տղային ծաղրում էին հրապարակայնորեն, մի անգամ նաև ծեծել են»*:

«Այժմ ժամանակավորապես բնակվում եմ մի համայնքում, որտեղ ականատես եմ դարձել թե ինչպես են մտավոր հիվանդությամբ աղջիկ երեխային ծիծաղի առարկա դարձնում և արգելում նրա հետ իրենց երեխաների հետ շփումը»:

Ինչպե՞ս է դրսևորվում բռնությունը կամ անհանդուրժողականությունը

Հարցվածները նաև նկարագրեցին երիտասարդության շրջանում բռնի գործողությունների կամ անհանդուրժողականության արտահայտումների տեսակները (վարքագիծ, շփման մշակույթ, գործելակերպ), որոնց իրենք ականատես են եղել իրենց համայնքներում հատկապես անդրադառնալով երիտասարդ տղամարդկանց անպարկեշտ, ճնշող և սպառնալից վարքագծի ձևերին, ինչպիսիք են ծաղրականությունը կամ ահաբեկումը: Իբրև խնդիր այս ամենի համատեքստում նշվել է երիտասարդների շրջանում տարածված անտարբերությունը բռնության դեպքերի վերաբերյալ:

Երիտասարդական աշխատողների հարցազրույցներից մի քանի հատվածներ.

«Կտրուկ և կոպիտ պահվածք, կարծրատիպային մտածելակերպ, տղամարդկանց կողմից կնոջ հանդեպ գերակայության դրսևորում»:

«Տարրական խնդիրները, անհամաձայնությունը բռունցքներով «լուծելու» դեպքեր»:

«Առհասարակ մեր հասարակության մեջ, հատկապես ինձ հանդիպած դեպքերը կապված են եղել հիմնականում գենդերային անհավասարության, սեռական (երբեմն նաև ազգային) փոքրամասնությունների հետ, բացի դրանից ազգայնականների կողմից մեկ այլ ազգության, մասնավորապես Ադրբեջան/Թուրքիայի քաղաքացու նկատմամբ ատելության և կոնֆլիկտի դեպքեր, վերջինիս ավելի հաճախ հանդիպում եմ Հայաստանից դուրս, ներկայումս էլ շատ եմ ականատես լինում»:

«Հիմնականում, բուլինգ կոչվածը միշտ էլ մնում է ցանկացած հասարակության մեջ ամենատարածված բռնության ձևը: Մեծ ատելություն ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ, ինչպես նաև կրոնական կամ ազգային փոքրամասնության հանդեպ խտրական վերաբերմունք»:

Ոչ երիտասարդական աշխատողների պատասխանները երիտասարդների շրջանում բռնության տեսակները բնութագրելու համար ավելի բազմազան էին.

«Հայկական անորակ սերիալներից վերցրած արտահայտությունները շատ են տարածված երիտասարդների շրջանում»:

«Միմյանց հետ հայհոյանքներով, գոռգոռոցներով և հրմշտանքներով խոսելու, կնոջը հրմշտելու, իրար սպառնալու, դանակ, անգամ ատրճանակ կիրառելու»:

«Տղաների մոտ ընդունված է խնդիրների լուծման բռնի ձևը, ինչին չեն մասնակցում աղջիկները, բայց ընդունում են դա: Ինչպես նաև, բռնություն (տարբեր տիպի) գործածվում է նաև կրթական հաստատություններում»:

«Բոլոր այն մարդիկ, ովքեր Հայ Առաքելական եկեղեցու կամ իրենց կրոնի հետևորդներ չեն, ընկալվում են կամ որպես անհավատ, «մուսուլման»՝ բացասական շեշտադրմամբ կամ ոչ հայ: Իգական սեռի ներկայացուցիչները ունեն սահմանափակ իրավունքներ, օրինակ, չեն կարող ունենալ հակառակ սեռի ընկերներ կամ զբաղվել ինչ–որ մասնագիտությամբ, որը «հարիր» չէ կնոջը և աղջկան (հայուգենի սինդրոմ): Սեռական փոքրամասնություններին մարդ չեն համարում և առաջնորդվում են նրանց վառելու կոչերով»:

«Ընտանեկան բռնություն, թաղային կռիվներ»:

Որո՞նք են բռնության առաջնային աղբյուրները

Երկու խմբերում էլ հարցվածների մեծամասնությունը համարում է, որ բռնության առաջնային աղբյուրը ընտանեկան միջավայրն է (երկու խմբերից հարցվածների մոտ 79%–ը): Ժամանակը ցույց կտա, թե արդյոք կդրսևորվի՞ քաղաքական կամք՝ քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնության դեմ ուղղված օրենքի արդյունավետ իրականացման համար, որը կարող է դիտարկվել ընտանիքում տիրող բռնության մթնոլորտի հաղթահարման հիմնական մեխանիզմների շարքում: Ընտանեկան միջավայրը կարող է նաև նպաստել կրոնական կամ էթնիկ փոքրամասնությունների հանդեպ խտրականությանը՝ այս կերպ ազդելով ընտանիքի երիտասարդ անդամների վրա: Սա արդեն պետք է վերացվի կրթական ծրագրերի միջոցով, որոնց իրականացումը ևս պետության պարտավորությունների շարքից է: Սակայն կրթական/ակադեմիական միջավայրն ինքնին հարցվածների կողմից նշվում է որպես բռնության ծագման մեկ այլ աղբյուր (ԵԱ՝ 50,5%, ոչ ԵԱ՝ 48,6%), որին գերազանցում են միայն հեռուստատեսությունը/զանգվածային լրատվամիջոցները (ԵԱ–ներ՝ 65,9%, ոչ ԵԱ–ներ՝ 63,9%):

Ստորև ներկայացված է «որո՞նք են բռնության աղբյուրները» հարցի պատասխանների ամբողջական պատկերը՝

Երիտասարդական աշխատողների պատասխանները՝



79.1%՝ Ընտանեկան միջավայր
65.9%՝ Հեռուստատեսություն և զանգվածային լրատվամիջոցներ

50.5%՝ Կրթական միջավայր
41.8%՝ Բանակ
40.7%՝ Սոցիալական մեդիա
22%՝ Քաղաքական կուսակցություններ

Գրեթե նույն պատկերն արտացոլվում է ոչ ԵԱ–ի պատասխաններում՝



79.2%՝ Ընտանեկան միջավայր
63.9%՝ Հեռուստատեսություն և զանգվածային լրատվամիջոցներ
48.6%՝ Կրթական միջավայր
43.1%՝ Սոցիալական մեդիա
38.9%՝ Բանակ
8.3%՝ Քաղաքական կուսակցություններ

Եզրակացություններ

Հայ հասարակության մեջ անհանդուրժողականության և բռնության տեսակների և դրսևորումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը արտացոլվում է հարցվածների կողմից նշված արմատականացման միտումների մեջ: Որպես այդպիսին՝ էթնիկական, կրոնական և սեռական փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողականությունը, ինչպես նշված է վերոհիշյալ պատասխաններում, տեղավորվում է ազգայնականության և շովինիզմի համատեքստում՝ որպես հարցվածների կողմից ընդգծված առաջին երկու միտումներ: Պետության կողմից խթանվող «ազգ–բանակ» գաղափարախոսությունը նույնպես ունի իր դերակատարությունը արմատականացման միտումների մեջ միլիտարիզմի տեսքով, որին էլ հաջորդում է կրոնական ֆունդամենտալիզմը: Ընդհանուր առմամբ պատկերը հետևյալն է՝

Հայաստանում ամենատարածված արմատականացման տեսակները և միտումները, ըստ ԵԱ–ի՝



49.5%՝ Ազգայնականություն
40.7%՝ Շովինիզմ
38.5%՝ Միլիտարիզմ
34.1%՝ Կրոնական ֆունդամենտալիզմ

Հայաստանում ամենատարածված արմատականացման տեսակները և միտումները, ըստ ոչ ԵԱ– ի՝



58.3%՝ Ազգայնականություն
41.7%՝ Շովինիզմ
36.1%՝ Միլիտարիզմ
30.6%՝ Կրոնական ֆունդամենտալիզմ

Որոշ դրական միտումներ սակայն ևս առկա են: Հարցվողներին խնդրեցինք նաև գնահատել բռնության նկատմամբ հնարավոր արձագանքները: Երիտասարդական աշխատողների մեծ մասը պատասխանել է, որ բռնության դեպքում որոշակի միջամտություն կլինի՝ 38,5%–ը նշել է, որ «մարդիկ անմիջապես կմիջամտեն և կկանխարգելեն բռնության սրումը», իսկ մյուս 38,5%–ը նշել է, որ «մարդիկ կհավաքվեն, լուռ կուսումնասիրեն իրավիճակը և միայն որոշ ժամանակ անց ինչ–որ մեկը հավանաբար կմիջամտի»: Ոչ երիտասարդական աշխատողների շրջանում ավելի շատ հարցվածներ են կարծում (40.3%), որ մարդիկ կարձագանքեն միայն որոշ ժամանակ անց, իսկ 29.2%–ը կարծիք հայտնեց, որ մարդկանց արձագանքը և բռնության կանխարգելման փորձը կհետևի անմիջապես: Երկու խմբերում էլ հարցվածների միայն 23%–ն է համարում, որ «մարդիկ հիմնականում կփորձեն շրջանցել և հազիվ թե որևէ մեկը միջամտի»:

Բովանդակություն

1 Ներածություն

5 Անհանդուրժողականության դրսևորման ամենատարածված տեսակները

11 Ինչպե՞ս է դրսևորվում բռնությունը կամ անհանդուրժողականությունը

13 Որո՞նք են բռնության առաջնային աղբյուրները

15 Եզրակացություններ

Թեպետ ընդունված կարծիք կա, որ գործազրկության բարձր մակարդակը և ցածր եկամուտները երիտասարդության շրջանում բռնության և արմատականության աճի հիմնական պատճառներն են, որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ ոչ թե աղքատությունը, այլ անարդարությունը, խտրականությունը, կոռուպցիան և անվտանգության ուժերի կողմից չարաշահումների փորձերն են հանգեցնում երիտասարդության շրջանում բռնության և արմատականության ձևավորմանը:

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ

Armenian Progressive Youth